ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/5447-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1235-29.12.2025-ՊԱ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխության վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի 2-րդ հոդվածում օգտագործվում է «տեղեկատվությունը» եզրույթը, այնինչ առերևույթ խոսքը վերաբերում է ոչ թե «տեղեկատվությանը» (տեղեկությունը փնտրելու և ստանալու, տեղեկությունը տրամադրելու գործընթացին), այլ՝ «տեղեկությանը» (անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ ստացված կամ ձևավորված տվյալներին): Ուստի, տարընթերցումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետում «տեղեկատվություն» բառը փոխարինել «տեղեկություն», իսկ 2-րդ կետում նշված «տեղեկատվությունը» բառերը փոխարինել «տեղեկությունը» բառերով՝ նկատի ունենալով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 3-րդ հոդվածի պահանջները:

2. Իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի պահանջների ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով օրենքի 29-րդ հոդվածում լրացվող 2.1-ին և 2.2-րդ մասերը խմբագրել այնպես, որպեսզի անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունը, էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագրվելու պահից, ինքնաշխատ եղանակով փոխանցվի ՀՀ ներքին գործերի նախարարությանը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի անձի վարելու իրավունքի ինքնաշխատ եղանակով դադարմանը:

Միաժամանակ, հաշվի առնելով օրինականության սահմանադրական սկզբունքի պահանջը, առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով օրենքի 29-րդ հոդվածում լրացվող 2.2-րդ մասում «ոստիկանությանը» բառը փոխարինել «Հայաստանի

Հանրապետության ներքին գործերի նախարարությանը» բառերով:

Ըստ այդմ՝ առաջարկում ենք «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով օրենքի 29-րդ հոդվածում լրացվող 2.1-ին և 2.2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ անձի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունը, էլեկտրոնային առողջապահության համակարգ մուտքագրվելու պահից, ինքնաշխատ եղանակով փոխանցվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության էլեկտրոնային ռեգիստր, որի հիման վրա տվյալ անձի վարելու իրավունքն ինքնաշխատ եղանակով դադարում է:

2.2. Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված՝ վարելու իրավունքը դադարելու մասին տվյալ անձը տեղեկացվում է համապատասխան տեղեկությունը տրանսպորտային միջոցների պետական գրանցման և հաշվառման էլեկտրոնային հարթակի իր անձնական էջում արտացոլելու միջոցով, իսկ առկայության դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին կամ բջջային հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:»:

Հարգանքով՝ **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**